

9027


891.99

5-79

Արամ Երեսնան

ԻԴԵԱԼԻՍԸ

ԳԱՆՏՈՒՐԻԱՆ. ՄԻ ԱՐԱՐԻԱՆՈՎ.



Տպարան
Ա. Ամենափրկչ. Վանելի
ԶՈՒՂԱ-ՍՊԱՀԱՆ
1920

891.99
6-79

25288-Կ.3.

ԵՐԵԿՈՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂՆԵՐԻՆ

Մեր բեմն ընդհանուր առմամբ աղքատէ գեղարւեստի տեսակներով. մեր երեկոյթներն անցնում են չափազանց տաղտկալի. բացի սովորական «արտասանութիւններից» և «ճառախօսութիւններից» համարեած չինք լսում մեր երեկոյթներում. մեր կատակներն ու խաղերը բռնազրօսիկ են և վիրաւորիչ. նոյնիսկ քիչ թէ շատ կանոնաւոր երգեցողութիւն չունենք, ել չարժէ խօսել օպէրայի, բալէտի մասին. երբեմն դրւում են միայն «կենդանի պատկերներ», բայց այն ել անունով միայն «կենդանի», որովհետեւ մեր բեմերը չունեն հարկաւոր լարմարութիւնները, լատկապէս գաւառներում: Հռոմում այնքան զարգացած պանտօմիման (անձայն բեմական գեղարւեստ, ուր զգացմունքներն արտայալուում են միայն շարժումներով և դիմախաղերով), որ և՛ գրամա է, և՛ կենդանի պատկեր, մեր մէջ համարեած գոյութիւն չունի. երբեմն մեծ քաղաքներում կարելի է տեսնել իբրև բացառութիւն. իսկ գեղարւեստի այդ ճիւղին վերաբերող գրական որևէ երկ մենք չենք ճանաչում: Պ. Արամ Երեմեանը դալիս է իր լուման զցելու այդ բացի մէջ «իդէալիստը» փոքրիկ գեղարւեստական երկով, փոքրիկ, բայց բաւական հետաքրքիր, որի ներկայացումը կարող է ազատել մի երեկոյթ ձանձրալի գառնալուց:

Այդ տեսակէտից մենք «իդէալիստը» լանձնարարում ենք երեկոյթ կտղմակերպողների առանձին ուշադրութեանը:

Ա. ԱԹԱՅԵԱՆ

1920 Մարտի 14,
Ն. — Զուղա.

2003



4439-564

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ

ՄԱԼՈՒՄԵՍՆ, ուսուցիչ, 35 տարեկան, միջին հասակով և
թարմ ու գրաւիչ դէմքով։ Կարճ մօրուք, մազերը բո-
լորովին սև։ Հագուստը եւրոպական և ճաշակով։ Ստա-
ցել է համալսարանական կրթութիւն և տոգորւած է
ժողովրդին ծառայելու վեհ գաղափարով։ Նարժւածքը,
ման գալն և գործունէութիւնը արագ և կրակոտ։
Վ.Ի.Ա.ՄԵՍ.Ն, Մալումեանի ընկերը, վաստաբան, 30 տարե-
կան, վայելուչ կազմւածքով և հաճելի դէմքով։ Մա-
զերը սև։ Հագուստը նոյնպէս եւրոպական։ Աւարտել
է Մոսկւայի Լազարեան ճեմարանը, տպա անցել է Գեր-
մանիա, ուր սովորել է ֆաստաբանութիւնը։ Համակ-
ւած է սօցիալական գաղափարներով։ Նարժւածքը և
քայլը վառվուն։

ՅԱ.ԱՄԻԿ, Մալումեանի քոյլը, 16 տարեկան, գեղեցիկ դէմ-
քով, նուրբ կազմւածքով, սևաչեայ և սևահեր։ Աւար-
տել է Թիֆլիսի գիմնազիոնը։ Հայլը և մայլը մեռել
են, մնացել են երկու եղբալրները։ Հագնւած է եւրո-
պական տարագով։ Նարժւածքը նուրբ է և կենդանի։
Վ.Ա.Ն.Յ, Յասմիկի փոքրիկ եղբայրը, 6 տարեկան, գեղեցկա-
դէմ, երեսը թուխ, յօնքերը սև։ Հագուստը պարզ և
գեղեցիկ։

ՄԱ.Ր.Օ, գաղթական կին, 30 տարեկան, սևաչեայ, ոտարո-
քիկ, պատառատուն զգեստ, թևերը բոլորովին մերկ,
իսկ զլուխը ծածկած հին թաշկինակով։ Հիւծւած, կմախ-
քացած և ապուշ նալւածք։ Նարժւածքը գանգաղ
(բռնած է Երւանդի ձեռքից)։

ԵՐԻԱ.Ն.Դ, գաղթական կնոջ որդին, 6 տարեկան, գեղեցկա-

դէմ, սեաչեայ, մազերը երկար և ցանուցրիւ։ Թևերն
ու ոտքերը միանգամայն մերկ և ոտաբորիկ։

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ, 25 տարեկան, զինւորական տարապով։
ԵՐԵՍՈՒԽՆ ՀՈԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ (որոնցից 25 հոգին հա-
յեր են, չ' քրդեր և 2՝ ասորիներ), կին, տղամարդ,
մանուկներ, բոլորն էլ խեղճ գրութեան մէջ՝ պատա-
ռատուն հագուստով, գրեթէ ոտաբորիկ և գլխաբաց-
շատերի ձեռքերին անտաշ գաւազան, իսկ իրենք փո-
շոտ, լոգնած և հիւծւած։*)

Ա. Ռ Ա Զ Ա Բ Ա. Ն

Պանտօմիմա կոչւում է դրամատիքական այն արտադրութիւ-
նը, որի մէջ դերակատարները իրենց գործողութիւններն ու զգաց-
մունքներն արտայատում են անխօս, միայն դէմքի և մարմնի շար-
ժումներով և որի զլխաւոր բնորոշ յատկութիւնը պատկերների
բնականութիւնը, պարզութիւնը և գեղարւեսականութիւնն է։

Իր նիւթը պանտօմիման քաղում է որեէ մի դէպքից, որի
շուրջ անդրադառնում է գործողութիւնը։

Հստ իր էութեան պանտօմիման բաժանւում է երկու տեսա-
կի. ա) Մնջկաթակ, բ) Գրամատիկական։

Մնջկատակ կոչւում է ծաղրական դրամատիքական այն ար-
տադրութիւնը, որի հերոսներն ամենահսարակ մարդիկ են և իրենց
անմիտ կուով և գործողութիւնով առաջ են բերում հանդիսական-
ների մէջ ծիծաղ, ծաղր, զայրոյթ և արհամարհանք։ Իսկ դրամա-
տիքականի մէջ նկարագրուում է որեէ մի դէպք և որի հերոսներն
օժտւած են զին յատկութիւններով և աչքի են ընկնում իրենց
աննկուն կամքով ու տոկուն բնաւորութեամբ։

Պանտօմիման սկիզբն առաւ Հոռմում, ուր կարճ ժամանակի
մէջ վերին աստիճանի կատարելագործութեան հասաւ։ Հոռմից
անցաւ պանտօմիման Յունաստան և այնտեղից էլ եւրոպական
ազգերին։

* * *

Սոյն պանտօմիակ բնագիրն առաջին անգամ ներկայացրած է Նոր-Զուզայի Ազգ-
երկուս դպրոցի թատրոնում՝ 1917 թւի Դեկտեմբերի 31-ին, իսկ երկրորդ ան-
գամ՝ 1919 թ. Դեկտեմբերի 31-ին։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

1920

Նոր — Զուզա.

*) Սոյն պանտօմիման ներկայացնել ցանկացողներից իննդրւում է ներկայա-
ցումից առաջ հանդիսականներին ծանօթացնել բովանդակութեան հետո։

ԲԵՄԸ

ԲԵՄԸ ՆԵՐԿԱԼԱԳՆՈՒՄ Է ՄԱԼՈՒՄԵԱՆԻ ԹԱՆ ՀԻւՐԱՍԵ-
ՆԵԱԿՅ, պարզ, բայց ճաշակով կահաւորւած:

Աջ* պատի մէջ մի մեծ լուսամուտ և մի դուռ, որ տա-
նում է սեղանատունը: Ձախ պատի մէջ մի ալլ դուռ, որ
տանում է ննջասենեակը, իսկ խորքի պատի մէջ մի ուրիշ
դուռ, որ տանում է փաղոցը: Բոլոր դռներն էլ ծածկւած
են գեղեցիկ վարագոյրներով:

ԲԵՄԻ մէջտեղում դրւած է փոքրիկ և բոլորակ մի սե-
ղան, ծածկւած գեղեցիկ սփռոցով, վրան մի ալբօմ, թեր-
թեր, ծխախոտ, մոխրաման, փոքրիկ շշով գինի, բաժակներ
և այլն: Սեղանի մօտ դրւած է գեղեցիկ մի բազկաթոռ: Աջ
պատի առջև, բեմի ծայրին, դրւած է քառակուսի մի ալլ
սեղան թաւշեալ ծածկոցով, որի վրայ դրւած են թանաքա-
ման, գրիչ, զանգակ և այլն: Սեղանի մօտ կան երկու գեղե-
ցիկ աթոռներ:

ԲԵՄԻ յատակն ամբողջապէս ծածկւած է գորգով. առաս-
տազից կախւած է գեղեցիկ ջահ՝ վառ մոմերով: Ձախ և խորքի
պատերից կախւած են գեղարւեստական նկարներ և Մալու-
մեանի հանգուցեալ հօր և մօր նկարները, ինչպէս և հա-
սարակական գործիչների և գրողների: Իսկ խորքի պատի առ-
ջև դրւած է դաշնամուրը, մօտը մեծ հայելի և ժամացոյց:

* Աջ և ձախ պիտի ընդունել հասարակութեան գիրքից նայելով:

Ի ԴԵԱԼԻ ԱՏՏԵԼ *

Տեսիլ առաջին

ՄԱԼՈՒՄԵԱՆ և ՎՈԱՄԵԱՆ

(Ամբողջ գործողութիւնը կատարում է արագ և մտքերն ու զգացումները
արտայայտում են անխօս, միայն դէմքի և մտքմնի շարժումներով):

Վարագոյրը բացւելիս բեմի և տեսից հնչում է քազցր և մե-
լամազձոտ երաժշտութիւն:

ՄԱԼՈՒՄԵԱՆ, մենակ, սենեակի մէջտեղում, բազկաթոռի
վրայ նստած ծխում է և մտածում (մի քանի վայրկեան լու-
թիւն): Աչքին են զարկւում պօստից դեռ նոր ստացւած
թերթերը. մէկը միւսի ետևից կարդում է... Յանկարծ ցընց-
ուում է (որովհետև մի սիւնակի վրայ կարդում է, խոշոր
տառերով գրւած, Տաճկահայաստանի կոտորածների սրտա-
ճըմլիկ նկարագրութիւնը), բարձրանում է տեղից և ձեռքը
ճակատին տանում, ապա զզւանքով դէն է գցում թերթը և
սկսում է արագ-արագ ման գալ, մտախոհ դէմքով: Յետոյ
կանգ է առնում բեմի առջևում և մտածում մի քանի բո-
պէ: Վճռում է գնալ և օգնել գաղթականներին: Մօտենում
է գրասեղանին և վերցնելով մի թուղթ, շտապով Վոամեա-
նին նամակ է գրում, որի մէջ յայտնում է իր վճիռը (Երա-
ժշտութիւնը լուսում է):

ՎՈԱՄԵԱՆ, խորքի դռնից մտնում է ներս (Աջ ձեռքում
ձեռնափայտը, իսկ ձախին՝ վերաբկուն), մի բոպէ կանգ առ-
նում, ապա դռան մօտ գտնւող մեխից կախում է վերաբկուն,
ձեռնափայտը և գլխարկն ու շտապում Մալումեանի մօտ,
բայց նո մտախոհ՝ ոչինչ չի լսում: Վոամեան ձեռքով
դպչում է Մալումեանի թւեին, որ անմիջապէս ձեռք է տա-

*) Իգէտիոտի նիւթը գերցրած է իրականութիւնից:

լիս Վռամեանին և հրաւիրում է նստել (նստում է Վռամեանը), ապա ցոյց է տալիս թէ իր նամակը և թէ թերթը: Վռամեան կարդում է և հոգեկան յուզմունքներ արտայալտում: Այնուհետեւ երկուսն էլ մօտենում են բեմի ծալրին, դէմքերը կէս հասարակութեան: Մալումեան յախտում է Վռամեանին իր վճիռը. խաչաձե (×) քաշում է ձեռքը կրծքին, իբր թէ պիտի զինւեմ և գնամ այնաեղ, գաղթականների մօտ, ուր արտասուքներ են թափում, ուր արիւնն է հոսում... (Մալումեան քայլում է, իսկ Վռամեան մտածում (Հանգիստ մի քանի րոպէ). Վռամեանն էլ համաձայնում է գնալ (իր միտքն արտայալտում է նոյն շարժումներով), ապա երկուսն էլ գնում են դուրս պատրաստւելու: Թըրում հազնում են զինւորական զգեստ, կրծքերին խաչաձե փամփուշտներ, ձեռքերին մի մի մասուզէր և ոտներին դեղին կաշւէ երկար կօշիկներ:

Տեսիլ երկրորդ ՅԱՍՄԻԿ և ՎԱՆՈ

Երաժշտութիւնը հնչում է աւելի մելամազնուա մօտիւով: ՅԱՍՄԻԿ, աջ պատի դռնից ներս է գալիս Յասմիկ ժպտուն, անհոգ դէմքով և կանգնում ծնողների նկարի առաջ. զարթնում են իր մէջ մի շարք ուրախ և տխուր զգացմունքներ, համբուրում է նկարը, ապա նստում բազկաթոռի վրայ և թերթում ալբոմը: Այնուհետեւ մօտենում է քառակուսի սեղանին, յանկարծ եղբօր գրած նամակն է աչքին զարկուում, կարդում է, նախ շփոթւում և անհանգստանում է, ապա սարսափէ արտայալտում, յետոյ ցնցւում և խոր հառաջում, նորից է կարդում և հոգեկան տանջանքներ արտայալտում: Կարդում է նաև թերթը և ցնցւելով սարսափէ արտայալտում, յետոյ սաստիկ յուզւում և յուսահատ ընկնում քառակուսի սեղանի վրայ և գլուխը ձեռքերի մէջ առած լուռ է լինում:

ՎԱՆՈ (Երկար լոռութիւնից յետոյ), գլխաբաց, ձեռքին մի

փոքրիկ ծաղկեփունջ, խորքի դռնից վազելով՝ մօտենում է քրոջը և վախվիսելով ձեռքը կամաց դնում է նրա ուսին և յետ քաշուում, բայց քոյրը ոչինչ չի զգում. նորից է դպչում. Յասմիկը գլուխը բարձրացնում է, ստանում ծաղկեփունջը, զըկելով՝ Վանօին համբուրում է և խոր մտածմունքի մէջ ընկզմում (Կարճ լոռութիւն):

Տեսիլ երրորդ

ՄԱԼՈՒՄԵԱՆ, ՎՐԱՄԵԱՆ, ՅԱՍՄԻԿ և ՎԱՆՈ

ՄԱԼՈՒՄԵԱՆ և ՎՐԱՄԵԱՆ, խորքի դռնից ներս են գալիս զինւած և շարժումներով խօսելէն: Յասմիկ կանգնում է շտապով և թաշկինակով սրբում աչքերը: Մալումեան ցոյց է տալիս քրոջը թերթն և շարժումներով այսպէս է արտայալտում իր միտքը.

—Քո՛լը*, ես եկել եմ քեզ մնաք բարով ասելու, սրովհետեւ չեմ կարող այլևս մնալ այստեղ, երբ այնտեղ մեր քոյրերն ու եղբայրները կոտորւում են և տանջւում: Նրանք կարօտ են օգնութեան, իսկ իմ այստեղ մնալը յանցանքների գերագոյնն է: Մնաք բարով, ես չեմ կարող նրանց անօգնական թողնել (Մի պահ քայլում է, ապա մտախոհութեան մէջ ընկնում): ՅԱՍՄԻԿ (Սաստիկ յուզումով բռնում է եղբօր ձեռքերը և համբուրելով կրծքին սեղմում), Եղբայր, խղճա ինձ և նրան (Ցոյց տալով փոքրիկ եղբօրը), ովք կը պահի, պահպանի մեզ, ովք մեզ համար հայր և մայր կլինի... Օօ՛, առանց քեզ ես չեմ կարող ապրել ծնրադրում է և ոտքերին փաթաթւելով հեկեկում, (մի րոպէ ծանր լոռութիւն):

ՄԱԼՈՒՄԵԱՆ (Ազատւելով Յասմիկից՝ յուզւած քայլում է արագ-արագ, ապա յենւում է պատին և ձեռքը ճակատին տանելով, մնում է անշարժ, մտածմունքի մէջ խորասուզւած, յետոյ մտքերից սմթափւելով՝ դառնում է քրոջը), քո՛լը, մի խնդրել, որ մնամ, իմ սիրտը շատ է ցաւում քեզ հա-

* Բառերը չպիտի արտասանել, այլ ոյն իմաստով հոգեկան ապրումներ պիտի ցոյց տալ:

մար, բայց ես չեմ ապրում միայն քեզ համար . . . (Յասմիկ Հոգեկան լուզմունքներ և տանջանքներ է ցոլց տալիս և չկարողանալով տանել կսկիծը՝ ընկնում է եղբօր գիրկը և հեկեկում (Լոռութիւն): Մալումեան սակայն անդրդւելի է մնում: Ազատւելով քրոջից, վերցնում է գինու շիշը, լըցնում է բաժակները և մնաք բարով ասում քրոջը, ապա խմում են (Վռամեան և Մալումեան) միմեանց կենաց և երդում են հաւատարիմ մնալ իրենց իդեալին: Սինուհետև Մալումեան գրկում, համբուրում է քրոջը և եղբօրն ու գուրս գնում. Վռամեան հետեւում է նրան: Իսկ Յասմիկ տեղն ու տեղը կանգնած, տիսուր հայեացքով նախում է եղբօր ետեից և աղերսագին պարզում է ձեռքերը գէպի նրան, ապա խելագարի պէս ալս ու այն կողմն է նախում, վազում գէպի առաջ և չը կարողանալով իրեն զսպել, ընկնում է բազկաթոռի վրայ և հեկեկում: Իսկ Վանօն գլուխը քրոջ ուսին դնելով՝ տիսուր կանգնում է (Մի քանի վայրկեան լոռութիւն). այնուհետև Յասմիկ գանդաղ քայլերով մօտենում է մօր նկարին, գէմքը բոլորովին սառը, անզգայացած՝ երկար նայում է, համբուրում և սկսում է հեկեկալ (Ծանր լռութիւն): Ապա Վանօի հետ չոքում է բեմի մէջտեղում և երկուսն էլ ձեռքերը տարածելով գէպի երկինք, ազօթում են (Հնչում է խիստ մելամաղձոտ երաժշտութիւն):

Վարագոյր (Երկու լոպէ)

Տեսիլ չորրորդ

Թեմն անփոփոխ է

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ, ՄԱՐՈ և ԵՐԻԱՆԴ

Խորքի գունից ներս են մտնում սուրհանդակը, գաղթական կինը և որդին, որը գողում է ամբողջ մարմնով: Սուրհանդակը լանձնում է Յասմիկին մի նամակ, որ շտապմամբ բաց անելով՝ կարդում է հետեւեալը.

Վան, 30 Յունիս 1920.

Թանկագին քոյլիկ,

Շատ առողջ եմ, միայն քո կարօտն եմ քաշում: Ճանապարհին, մի հովտում, կուի բռնւեցինք թրքերի հետ (Յասմիկ սարսափ է արտայալտում), բայց մի ուժեղ գրոհով յետ մղեցինք մեր թշնամուն (Ուրախանում է): Մի քանի օրից յետոյ մեզ նորից շրջապատեցին (Սարսափում է). մենք կուտում էինք հովտի բարձունքից, լանկարծ անողոք գնդակը գետին տապալեց սիրելի Վանօմեանին (Հառաչում է). մի սարի լանջին թաղեցի նրան (Սաստիկ տիսրում է), ապա ուղևորւեցի Վանօ: Ճանապարհին հանդիպեցի երկու գաղթականների (Նալում է գաղթականներին), որոնք անօգնական ընկած էին. մի սուրհանդակով նրանց ուղարկում եմ քեզ: տանջած հայ ժողովրդի փշրանքներն են նրանք, խնամիր գուրգուրալով, մինչև իմ վերադարձը:

Եռտով կտեսնենք սիրելի քոյլիկ:

Եղբայրդ՝

Մալումեան

Յասմիկ համբուրում է նամակը և շտապով պատասխանում (Սուրհանդակը պատասխանն ստանալով՝ մեկնում է), յետոյ, ժպիտը երեսին, մօտենում է գաղթական որբիկին և համբուրում, ապա շտապում է միւս սենեակը և նոր շորեր քերելով՝ հագցնում ու մօր հետ տանում է ննջասենեակը,

9027

— 14 —

որպէսզի հանգստանան. Վանօն հետևում է նրանց (Լռութիւն): Յասմիկ վերադառնում է տխուր և վշտալից՝ նստում դաշնամուրի առաջ և նւագում է տխուր մի էլիգիս (Մօտերկու ըոպէ), ապա մօտենալով գրասեղանին, նստում է և լուռ կարդում, յանկարծ գիրքը գցում է սեղանի վրայ և խոր մտածմունքի մէջ ընկնում՝ գլուխը ձեռքերի մէջ առած:

Տեսիլ հինգերորդ

ՄՍ.ԼՈՒՄԵԱՆ և ՄԻ ԽՈՒՄԲ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

Հնչում է երաժշտութիւնը խիստ մեշամաղձոտ մօտիւով:

Գաղթականները խորքի գունից գալիս են ներս (Յասմիկ սաստիկ շւարած կանգնում է), ապա վազում է ներս Մալումեան (Զեռքին դրօշակ, իսկ արիւնոտ գլուխը թաշկինակով կապած) և ընկնում է բազկաթոռի վրայ: Յասմիկ սարսափած վազում է առաջ և ընկնում եղբօր ծնկների վրայ (լռութիւն):

Վ Ե Ր Զ

2013



